Ու հեծաւ ձին, ընկաւ խոշունի մէջ. խոշունն ջարտեց ու գնաց. գնաց, տեսաւ, օր մէկ մարդ կայներ ա խոշունի առէջ՝ ձին հեծուկ, մզրախ լէ ձեռ։

Քշեց ընդոր խոշունի վրէն։

Ըսեց.—Դաւիթ, իմ խոշունին դագմիշ մ'էղնի։

Դաւիթ հարցուց թէ՝—Դու ո՞ր կողմի մարդն իս։

Ըսեց.—Ես արևելոց կողմի մարդն իմ։

Ըսեց.—Դաւիթ, իմ խոշունին դագմիշ մ'էղնի, արի, ես դու ահտ ու շարթ էնինք։

Ըսեց.—Ի՞նչ ահտ ու շարթ էնինք։

Ըսեց.—Մկայ ես լէ ազաբ, դու լէ ազաբ, մենք օր կարգուանք քըզի տղայ էղաւ, ընձի ախչիկ, իմ ախչիկ տամ քու տղին, քըզի ախչիկ էղաւ, ընձի տղայ, քու ախչիկ տուր իմ տղին։

Վերի դէն Աստուած վկայ բռնին, ներքի դէն լէ Դաւիթի տկի ձին։

Քառսուն ձի կ'ուզիմ մէկ բաժ, մէկ ռանգ»,
և օգտուելով Դաւիթի բացակայութիւնից, ստանում է պահանջները։ Դաւիթ իմանալով եղելութիւնը, գնում է վրէժ առնելու, ճանապարհին իւր ոյժը պողպատէ ծառի (փոխանակ սեան) վերայ փորձելով։ Դաւիթ յաղթում է Մսրամելիքին, բայց ներում է, զիջանելով Մսրամելիքի իշխանների խնդրին։

Դաւիթ գնում «Գիլ գետայ ջրի վրէն» լողանալու։ Մսրամելիքի մարդիկը խարդախութեամբ բռնում են Դաւիթին։ ԶինովՅովան, մատանուց իմանալով Դաւիթին հասած վտանգը, փութաթռչում է եօթ գոմշի կաշով և բոռալով յիշեցնում է նորան աղօթքը։

«Ցիշամ քեզ հէրն ի կենդանին.
Մարութայ Բանձր Աստուածածին,
Խաչնը պատարագին,
Դու պահապան էղնիս պարոն Դաւթին»,

ասում է Դաւիթ, և իսկոյն շղթաները կտրատում և ամեն մի օղը մի մարդ է սպանում թշնամուց։ Դաւիթ Մսրամելիքին երկու մաս է անում, որոնցից մէկը ձայն է տալիս՝ «Ձախով տեղ փորիր, աջով թաղիր», բայց Դաւիթ աջով փորում, ձախով թաղում է։